

ԻՐԱՎՈՒՆՔ

ԻՐԱՎԱԶՍՓ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ ԵՎ ԶԱՓԱՆԻՇ

Բարխուդարյան Սերգեյ

*Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարան*

Հայրենական իրավագիտության մեջ իրավաչափ վարքագծի հիմնախնդիրը մշակվել է դեռևս 20-րդ դարի 70-80-ական թվականներին, երբ խորհրդային հասարակությունում հրատապ խնդիր էր նրա անդամների իրավական ակտիվության բարձրացումը: Եվ որպես ավանդական օբյեկտ իրավագետների ուշադրությունը միշտ սևեռված է եղել ոչ իրավաչափ վարքագծի դրսևորմանը, քանի որ իրավունքը գործ ունի առաջին հերթին վարքածի նորմից շեղվողների հետ:

Վերլուծելով իրավաչափ վարքագծի դրսևորումները, հարկ է նրկատի ունենալ, որ իրավագիտության մեջ վարքագիծը սահմանափակված է արարքներով, արտահայտվելով իրենից դուրս՝ գործողությամբ, անգործությամբ կամ էլ բառացի, այսինքն բանավոր կերպով (օրինակ՝ խոսքով վիրավորելը): Իսկ փիլիսոփայության, հոգեբանության մեջ մարդու գործունեությունը առավել լայն է հասկացվում, ինչպես ցանկացած ակտիվություն, այդ թվում նաև ներքին, մտածմունքային գործունեություն է¹:

Այսպիսով, իրավունքը կարգավորում է մարդու մտավոր գործունեությունը, արտահայտվելով որևէ բանի սահմանից դուրս: Սակայն այստեղ նույնպես գոյություն ունի որոշակի սահմանափակում: Բանը նրանում է, որ օրենքի հետ կապված վարքագիծը կարող է լինել օրինական, անօրինական (հակաօրինական) և իրավաբանորեն չեզոք (անտարբեր):

Վերջինս իրավունքով չի կարգավորվում և իրավական հետևանքներ չի առաջացնում: Ինչպես հայտնի է, իրավունքը չի ներթափանցում հասարակական կյանքի որոշակի ոլորտներ: Իրավաչափ և անիրավա-

¹ Добрынина Е. Путь на запад и обратно// . Российская газета, 2008, с.183.

չափ վարքագծերը համարվում են վարքագծի իրավաբանորեն նշանակալի տարատեսակներ և կարող են միավորվել մեկ երևույթի՝ իրավական վարքագծի²:

Իրավաչափ վարքագծին ներհատուկ են հետևյալ հատկանիշները՝

- իրավաչափ վարքագիծը համապատասխանում է իրավական նորմերի պահանջներին: Մարդը գործում է իրավաչափ, եթե նա հստակ պահպանում է իրավական կարգադրագրերը: Դա վարքագծի ձևական - իրավաբանական չափանիշն է:
- իրավաչափ վարքագիծը սովորաբար սոցիալապես օգտակար է: Դա գործողություն է, որը համարժեք է կյանքի կենսաձևին, օգտակար են (ցանկալի են) և երբեմն անհրաժեշտ են նաև հասարակության նորմալ գործառնության համար: Այն դրական դեր է խաղում նաև անհատի համար, քանի որ դրա շնորհիվ ապահովվում է ազատությունը, պաշտպանվում են օրինական շահերը,
- իրավաչափ վարքագծին ներհատուկ են հատկանիշներ, բնութագրելով նրա սուբյեկտիվ կողմը, որին, ինչպես ցանկացած այլ գործողության, կազմում են շարժառիթն ու նպատակը, արարքի հնարավոր հետևանքների գիտակցման աստիճանը, նաև անհատի ներքին վերաբերմունքը դրան: Ընդ որում շարժառիթներն արտացոլում են ոչ միայն ուղղվածությունը (խախտում են իրավունքի նորմը, թե՞ ոչ), բայց և ակտիվության բնույթը, աստիճանը, ինքնուրույնությունը և իրագործման ընթացքում վարքագծի ինտենսիվությունը: Սուբյեկտիվ կողմը վկայում է անհատի իրավական մշակույթի մակարդակը, նրա պատասխանատվության աստիճանը, վերաբերմունքը սոցիալական և իրավական արժեքներին³:

Իրավաչափ վարքագծի սոցիալական դերը արտակարգ մեծ է: Այն իրենից ներկայացնում է իրավունքի իրագործման այն առավել արդյունավետությունը, որը պահպանվում է պետության կողմից: Եվ հենց իրավական վարքագծի միջոցով է իրականացվում հասարակական հարաբերությունների կարգավորումը, որը համարվում է անհրաժեշտ գործոն հասարակության նորմալ գործառնության և զարգացման համար, արդյունքում ապահովվելով կայուն իրավակարգ:

² Лейст О. Сущность права, Проблемы теории и философии права. М., 2022, с.89.

³ Иванников И. Концепция правовой культуры/ Правоведение, N3, 1998, с.44.

Հարկ ենք համարում նշել, որ իրավաչափ վարքագծի առանձին տեսակներ օբյեկտիվ անհրաժեշտություն են հասարակության նորմալ զարգացման համար: Դրանց թվին կարելի է դասել, օրինակ հայրենիքի պաշտպանությունը, աշխատանքային պարտականությունների կատարումը, ներքին աշխատանքային կանոնակարգի պահպանումը, ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը և այլն: Նման վարքագծի տարբերակները ամրագրվում են իմպերատիվ իրավական ակտերում պարտավորությունների տեսքով: Դրանց կատարումն ապահովվում է (պետության կազմակերպչական գործունեությունից զատ) պետական հարկադրանքի սպառնալիքով:

Վարքագծի մյուս տարբերակները հետագայում չլինելով այդքան անհրաժեշտ, համարվում են ցանկալի հասարակության համար (օրինակ՝ ընտրություններին մասնակցելը, ամուսնադրությունը, պաշտոնատար անձանց անիրավաչափ գործողությունները բողոքարկելը և այլն): Նշված վարքագիծը ամրագրվում է ոչ թե պարտականություն, այլ որպես իրավունք, որի իրագործումը առավելապես կախված է հենց լիազոր անձի կամքից և շահերից: Նմանատիպ վարքագծի շատ տարբերակներ ամրագրված են դիսպոզիտիվ նորմերում:

Հնարավոր է նաև սոցիալական թույլատրելի վարքագծի կանոններ: Այդպիսիք են, օրինակ՝ ամուսնալուծությունը, աշխատանքի հաճախ փոփոխումը, գործադուլը և այլն: Ամեն դեպքում պետությունը շահագրգռված չէ դրանց տարածվածությամբ: Սակայն այդ գործողությունները իրավաչափ են, թույլատրված են օրենքով, և դրա համար էլ դրա կատարման հնարավորությունը ապահովվում է պետության կողմից:

Իսկ ինչ վերաբերվում է սոցիալապես վնասակար, հասարակության համար ոչ ցանկալի վարքագծին, ապա այն նորմատիվորեն ամրագրվում է արգելքների ձևով: Այս դեպքում իրավաչափ վարքագծի առաքելությունն է խուսափել արգելված գործողություններից:

Այսպիսով, իրավաչափ կարելի է նշել իրավական վարքագծի այնպիսի տարբերակ, որը հետագայում լինելով հանրային օգտակար, ցանկալի և սոցիալապես թույլատրելի, իրականացվում է իրավական կարգադրագրերին համապատասխան և պահպանվում է պետական պաշտպանության հնարավորությամբ:

Իրավաչափ վարքագիծը, իրենից ներկայացնելով մարդկային վարքագծի առավել տարածված ձևը շատ բազմազան է: Այն կարելի է դա-

սակարգել ամենատարբեր հիմքերով՝ ըստ հասարակական հարաբերությունների ոլորտի, իրավունքի ճյուղերի և այլն:

Անհատների իրավաչափ վարքագծի հետագա դասակարգման շարադրման համար որպես հիմք կընդունենք կախված գերակշռող շարժառիթներից: Այդ կապակցությամբ առանձնացվում են դրա հետևյալ տեսակները:

Դրական (սովորական) վարքագիծը, դա սովորական գործունեության ընթացքում իրավական նորմերի պահպանման շրջանակներում վարքագիծն է (օրինակ ծառայողական պարտականությունների պահպանումը): Նման վարքագիծը իր արտահայտումն է գտնում առօրեական ծառայողական, կենցաղային և մարդու կյանքի այլ ոլորտներում: Այդ տեսակի վարքագծի շրջանակներում քաղաքացիները կատարում են իրավաբանական պարտականություններ, այս կամ այն նշանակության իրավաբանական նշանակալի գործողություններ: Նման վարքագիծը անհրաժեշտ է մարդու նորմալ կենսագործունեության համար ընտանիքում, պետական, հասարակական գործունեության մեջ: Իրավաչափ վարքագծի տվյալ տեսակը ենթադրում է, որ անհատի համար յուրացրած իրավական գաղափարներին և սկզբունքներին հետևելը շատ դեպքերում անշուշտ դառնում է մշտական կրկնվող գործողություն, առօրյա վարքագծի ակտ:

Կոնֆորմիստական (պասսիվ) վարքագիծը բնութագրվում է իրավունքի նորմի նվազ պահպանմամբ իր գործողությունները շրջապատի վարքագծին ենթարկելու ուժով՝ մարդը գործում է «ինչպես բոլորը»:

Կոնֆորիզմը (լատ. konforism-նմանատիպ) որպես սոցիալական հոգեբանության կատեգորիա իր մեջ ընտրում է նրա այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ հարմարվողականությունը, գոյություն ունեցող կարգի պասսիվ ընդունումը, սեփական տեսակետի բացակայությունը, անպայման հոգեբանական ճնշմանը ենթարկվելը: Կոնֆորմիստները դրանք մարդիկ են, որոնք շատ անգամ զրկված են անհատականությունից, ենթարկվում են համահարթեցմանը:

Սոցիալական կոնֆորիզմի տարածման արդյունքները արմատավորվել են դեռևս մեր ոչ վաղ պատմությանը: Ինչպես հայտնի է, խորհրդային իշխանության ժամանակ անհատը իր վարքագիծը հարմարեցնում էր ընդհանուր ստանդարտին, որտեղ նախաձեռնողականությունը չէր խրախուսվում: Մարդու անձնական որակները ճնշվում և դուրս էին մղվում պետության իշխանական հեղինակությամբ, որը զրկում էր հնարավորությունից գործելու համաձայն իր ներքին համոզմունքի:

Մարգինալ (սահմանային) վարքագիծը հիմնվում է իրավաբանական պատասխանատվության ենթարկվելու վախով, անձնական հաշվարկով, դատվելու վախով: Մարդկանց նման վարքագիծը համապատասխանում է իրավունքի գործող նորմերին, բայց նրանց իրավագիտակցությունը այլ նորմերի հետ հակասության մեջ է գտնվում: Վարքագծի մարգինալ տեսակն առավել բնութագրական է այն անձանց համար, որոնք այս կամ այն պատճառով չունեն նյութական բարիքների անհրաժեշտ նվազագույնը, ապրում են նյութական ծանր պայմաններում և ռեալ պայմաններ չեն տեսնում իրենց վիճակը փոփոխելու համար: Մարգինալ վարքագիծը համարվում է իրավաչափ, քանի որ անձը իրավական կարգադրագրերին հավանություն չի տալիս, բայց և այնպես գնում է դրա պահպանմանը և կատարմանը:

Սոցիալապես ակտիվ իրավաչափ վարքագիծը դա գործունեություն է ուղղված իրավական նորմերի իրագործմանը, որպես հիմք դրա արժեքների գիտակցմանը և դրա կատարման անհրաժեշտության խորը գիտակցմանը: Անհատի սոցիալապես ակտիվ իրավաչափ վարքագիծը բնութագրվում է նրա գիտակցված և նպատակաուղղված գործունեությամբ հանուն որևէ սոցիալական հանրօգուտ արդյունքի հասնելու համար: Նման վարքագծի կարևոր չափանիշը տեսանելի է փաստացի պոզիտիվ արդյունքների առկայությամբ: Սոցիալական-իրավական ակտիվությունը որոշվում է իրավագիտակցության բարձր աստիճանով, խորը իրավական համոզվածությամբ, ձևավորված ինքնուրույնությամբ, գիտակցորեն իր մեջ ընդունելով պատրաստակամություն օգտագործել իրավունքով տրված հնարավորություններ, ստեղծագործաբար ղեկավարվել դրանցով առօրյա վարքագծում:

Անձի իրավական ակտիվությունը կարող է դրսևորվել իրավական երևույթների ճանաչման բնագավառում, իրավաստեղծագործության ոլորտում, օրենքի խախտման դեմ ուղղված գործունեության մեջ:

Ճանաչողական ակտիվությունը հետազայում ընդգրկված լինելով սոցիալական ակտիվության ընդհանուր համակարգում հանդես է գալիս որպես անձի հետագա պրակտիկ գործունեության պայման: Ճանաչողական ակտիվության հիմնական գիծը նպատակաուղղվածությունն է, բայց կախված նրանից, թե արդյո՞ք անձի հետագա գործունեության նպատակները համընկնում են իրավական նորմի նպատակների հետ: Ընդգծենք նաև, որ միայն դրական նպատակն է բնութագրում անձի իրավական ճանաչողական ակտիվությունը, հակառակ դեպքում մենք գործ կունենանք հակահասարակական դրսևորման հետ, ձգտելով ու-

սումնասիրել օրենքը, հետագայում գործել դրա պահանջներին հակառակ⁴:

Իրավաստեղծ ոլորտում անձի ակտիվությունը տեղեկատվական-ճանաչողական ոլորտում ակտիվության հետ մեկտեղ իրականության մեջ իրավական գիտակցության արտահայտումն է: Իրավական նորմը, ոչ բոլոր դեպքերում է «ծնվում» պետական մարմիններում: Իրավական նորմի փոփոխման կամ ստեղծման գործնական անհրաժեշտությունը հաճախ առաջանում է առանձին քաղաքացիների, հասարակական խմբերի, կոլեկտիվների գիտակցության մեջ: Պոզիտիվ իրավական կենսառախադրյալի առկայությունը հիմնվելով մեծ կենսափորձի վրա, կոնկրետ հասարակական հարաբերությունների իմացությունը ծնում է անհամաձայնություն հնացած իրավունքի նորմի վրա, կամ էլ նորմի բացակայության (օրենսդրության բացի), որը որոշակի պայմաններում կարող է քաղաքացու իրավաստեղծագործության դրսևորման խթան հանդիսանալ: Իրավաստեղծագործական ակտիվությունը կարող է դրրսևորվել տարբեր ձևերով: Դա կարող է լինել ակտիվությունը պետական կազմակերպչական ձևերով (մասնակցությունը օրենքի նախագծի քննարկմանը և ընդունմանը), անձի ինքնագործունեության ակտիվությունը իրավունքի ոլորտում որոշակի ձևով քվեարկումը ռեֆերենդումի անցկացման ժամանակ):

Անկասկած իրավական ակտիվությունը կարող է և պետք է դրսևորվի նաև օրենքի խախտումների դեմ ուղղված գործունեության մեջ: Ընդ որում ակտիվությունը իրավապահ ոլորտում կարող է արտահայտվել ինչպես օրինականության խախտմանը ինքնուրույն հակադեցություն ունենալով (օրինակ հանցանք կատարած անձին բռնելիս), այնպես էլ տարբեր պետական հանձնաժողովների աշխատանքներում մասնակցություն ունենալու ձևով (վարչական, դիտորդական, անչափահասների գործերով և նրանց իրավունքների պաշտպանության):

Ենթադրում ենք, որ իր առանձնահատուկ գծերը ունի պաշտոնատար անձանց մասնագիտական - իրավական ակտիվությունը, այդ թրվում ոստիկանության մարմինների աշխատակիցները կիրառում են իրավունքի նորմը կենսագործունեության նշված ոլորտներում:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ խոչընդոտները, որոնք կանգնած են անձի իրավական ակտիվության ձևավորման և դրսևորման ճանապարհին բազմաթիվ են՝ հասարակությունում սոցիալական և իրավական ձևախախտումները, անձի իրավական պաշտպանու-

⁴ Власов В. Теория государства и права, Учебник Ростов н/Д 1997, с.312.

թյան հուսալի երաշխավորված համակարգի բացակայությունը, լայնորեն տարածված իրավական նիհիլիզմը և բնակչության իրավաբանական անգրագիտությունը և այլն:

Իրավաչափ վարքագծի առաջարկված դասակարգումը, անկասկած ունի ճանաչողական բնույթ, թեկուզ և հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ իրավաչափ վարքագծի թվարկված տեսակների միջև սահմանները բավականին պայմանական են: Ոչ բոլոր դեպքերում է, որ այս կամ այն արարքը կարելի է լրիվ համոզվածությամբ վերագրել իրավաչափ վարքագծի որոշակի տեսակին: Իրավունքի համար շարժառիթները, որոնք ընկած են իրավաչափ վարքագծի այս կամ այն տարատեսակի հիմքում, չունեն որոշիչ նշանակություն, քանի որ և այն վարքագիծը, որը կատարվում է այլասիրական (ալտրուիստական) դրդումներից և վարքագիծը, որի կատարման դրդապատճառ է հանդիսանում էգոիստական շահերը, հավասար չափով ճանաչվում են իրավաչափ:

Իրավաչափ վարքագիծը օրենքի հնազանդ վարքագիծ է: Հենց դրա շնորհիվ իրավունքը գործում է, ձգտելով հասնելու նրա առջև ծառացած խնդիրներին, նրանից դուրս իրավունքը ի գործու չէ լիովին դրսևորել իր կարգավորիչ կարողությունները: Դա հենց օրինականության պահանջի իրագործման գործընթացի էությունն է:

Իրավունքի նորմի իրագործման այդ եղանակի առկայության շնորհիվ իրականացվում է հասարակության նորմալ կենսագործունեությունը, իրականացվում է դրա կառավարումը, քաղաքացիների կողմից իրականացվում են սուբյեկտիվ իրավունքները և իրավաբանական պարտականությունները:

Անվիճելի է նաև այն հանգամանքը, որ օրինականության ապահովման համար կարևոր դեր է խաղում վերաբերմունքը իրավունքին, նրա սկզբունքներին և նորմերին, դրանց պահպանմանը, քանի որ հենց նեգատիվ կամ անտարբեր վերաբերմունքը իրավունքին համարվում է օրինականության պահանջի խախտման առավել տարածված պատճառը:

Գոյություն ունեն ոչ պակաս միջոցներ, որոնք խթանում են իրավաչափ և առանձնապես սոցիալ - ակտիվ վարքագիծը: Խոսքը գնում է այն խթանիչ գործոնների մասին, որոնք ունեն իրավական և ոչ իրավական բնույթ: Ակտիվ իրավաչափ վարքագծի ոչ իրավաչափ դրդապատճառ կարող է լինել փառասիրությունը, ձգտումը առավել բարձր պաշտոններ զբաղեցնելը, հասնել իշխանության և այլն:

Իրավական խթանիչները օրինապահ վարքագծի իրավապահ մղումներ են, սուբյեկտի սեփական շահերի բավարարման համար բանապատ ռեժիմ ստեղծելով: Բոլոր իրավական խթանիչների մեջ առավել տեսանելի կշիռ ունեն արտոնությունները և պարզևատրումները, որոնք իրենց ամրագրումն են ստացել տարբեր իրավական ակտերում:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է իրավաչափ վարքագիծը որպես իրավական մշակույթի արտահայտման հիմնական ձև և չափանիշ: Հոդվածում հեղինակը բացահայտում է իրավաչափ վարքագծի էությունը, դրան ներհատուկ հատկանիշները, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, դրսևորման ձևերը, իրավաչափ վարքագծի սոցիալական դերը, որպես հասարակության առաջ ծառացած խնդիրների լուծման կարևորագույն գործոն:

Բանալի բառեր. վարքագիծ, ակտիվություն, խթանիչ, պարտավորություն, իրավունք, շարժառիթ, իրավանք:

ПРАВОМЕРНОЕ ПОВЕДЕНИЕ КАК ОСНОВНАЯ ФОРМА И КРИТЕРИЙ ВЫРАЖЕНИЯ ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ

Бархударян Сергей

*Кандидат юридических наук, доцент
Армянский государственный педагогический
университет имени Х. Абовяна*

РЕЗЮМЕ

В статье рассматривается правомерное поведение как основная форма и критерий выражения правовой культуры. В статье автор раскрывает сущность правового поведения, присущие его признаки, объективные и субъективные стороны, формы проявления, социальная роль правового поведения как важнейший фактор для решения задач стоящих перед обществом.

Ключевые слова. поведение, активность, стимулы, обязательство, право, мотив, правовая норма.

LEGAL CODE OF CONDUCT AS A BASIC FORM AND MEASUREMENT OF EXPRESSION OF LEGAL CULTURE

Barkhudaryan Sergey

PhD in Law, Associate Professor

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

SUMMARY

This article presents the legal code of contract as a basic form and measurement of the expression of legal culture. The author defines the essence of the legal code of the contract, its distinctive features, objective and subjective components, external and subjective aspects, forms of conclusion, and the role of the legal code of contrast in solving urgent problems of public interest.

Keywords. conduct, activity, incentives, obligation, law, motive, legal norm.